**Արձանագրություն N 2**

**ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի**

ք.Երևան

14 փետրվարի 2020թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Սարգսյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Ա. Այվազյան |
| | Ա. Զաքարյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Գ. Կարապետյան |

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

**(Ա. Սարգսյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-20/1** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 2. ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտերի բացման մասին

**(Ա. Սարգսյան)**

1. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1 | «Սթեյջ Սթայլ» ՍՊԸ | Ք. Երևան, Եղ.Թադևոսյան 12/3 28<br>Հեռ՝ 094800011, bagrat.divanyan@mail.ru |
| 2 | «Տիգվան» ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Գեղանիստ 26փ., 14 տուն |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին

**(Ա. Սարգսյան)**

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցներիի կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ «Տիգվան» ՍՊԸ ՍՊԸ-ի Հավելված 1.1-ի՝ (Հավելվածը բացակայում է):

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

**(Ա. Սարգսյան)**

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «Տիգվան» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացնի իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 18.02.2020թ. 17:00 ներառյալ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

## 5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

**(Ա. Սարգսյան)**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ՀՄԱԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար «Տիգվան» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2020 թվականի փետրվարի 18-ին, ժամը 17:00-ին՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0***

Հանձնաժողովի.

| | |
|---|---|
| նախագահ՝ | Ա. Սարգսյան |
| բացող անդամներ՝ | Ա. Այվազյան |
| | Ա. Զաքարյան |
| գնահատող անդամներ՝ | Ա. Հակոբյան |
| | Լ. Գրիգորյան |
| քարտուղար՝ | Գ.Կարապետյան |